
	<p align="center">«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ</p>	<p align="center">11RBD/12CIB RL 72-01-06</p>	<p align="center">Էջ 1/4</p>
<p align="center">ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ</p>		<p align="center">Խմբ.4/ Ed.4</p>	
		<p align="center">Ուժի մեջ է 30/09/2019թ-ից</p>	


1. Ուղղորդման ծրագրին կարող է մասնակցել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ:
2. Ուղղորդման ծրագրին մասնակցելու համար ուղղորդողը պետք է Բանկին տրամադրի իր, ուղղորդվող անձի, ուղղորդվող ծառայության (այսուհետ՝ ծառայության) տվյալները և ստանա չկրկնվող ուղղորդման կողմ¹ Ամերիաբանկի (այսուհետ՝ Բանկ) վեբ կայքում ուղղորդման հայտը լրացնելու միջոցով: Չկրկնվող ուղղորդման կողը անհրաժեշտ է տրամադրել ուղղորդվող անձին, որպեսզի վերջինս ծառայությունը ստանալիս/օգտվելիս տրամադրի ուղղորդման կողը Բանկին: Ուղղորդվող անձը ստորև նշված ծառայություններից օգտվելիս պետք է պարտադիր նշի, որ ինքը օգտվում է Բանկի ծառայություններից ուղղորդման ծրագրի շրջանակում, ի հավաստում որի՝ նա պետք է Բանկին ներկայացնի ուղղորդման կողը:
3. Բանկ կարող են ուղղորդվել հետևյալ ծառայությունները՝
 - ✓ Հաշվի բացում և գործարքներ կատարելու իրավունքով ինտերնետ-բանկից օգտվող նոր հաճախորդ
 - ✓ Նոր քարտ
 - ✓ Նոր վարկ կամ վարկային գիծ
 - ✓ Ամերիա Գլոբալ Թրեյդինգ (ԱԳԹ) առևտրային համակարգի միջոցով արժեթղթերի շուկայում գործառնություններ
4. Ուղղորդող անձին պարզևատրում տրամադրվում է միայն հաջողված ուղղորդումների համար: Ուղղորդումը համարվում է հաջողված, եթե՝
 - ✓ ուղղորդվող անձին ծառայությունը փաստացի տրամադրվում է

¹ Բացառությամբ ծրագրի գործընկերների կողմից ստացված ուղղորդումների, որոնց դեպքում կարող են սահմանվել ուղղորդումների ստացման այլ մեխանիզմներ:

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD/12CIB RL 72-01-06	էջ 2/4
ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբ.4/ Ed.4	
		Ուժի մեջ է 30/09/2019թ-ից	

- ✓ ծառայության տրամադրման պահին ուղղորդվող անձը ներկայացնում է տվյալ ուղղորդմանը համապատասխանող չկրկնվող ուղղորդման կողմ Բանկի աշխատակցին
- ✓ ծառայության տրամադրման պահին չկրկնվող ուղղորդման կողմի վաղեմության ժամկետը լրացած չէ

5. Ուղղորդման կողմն ուժի մեջ է ուղղորդման կողմի գեներացման պահին հաջորդող երեք ամիսների ընթացքում:
6. Ուղղորդող անձի պարզևատրումները վճարվում են Բանկի կայքում ուղղորդման հայտում ուղղորդող անձի կողմից նշված դրամային քանակային հաշվին:
7. Ուղղորդող անձի՝ տվյալ ամսում տրամադրված ծառայությունների դիմաց պարզևատրումները վճարվում են ամսական պարբերականությամբ՝ ելնելով հաջողված ուղղորդումների տեսակից և քանակից՝ բացառությամբ ԱԳԹ առևտրային համակարգի միջոցով արժեթղթերի շուկայում գործառնությունների դիմաց պարզևավճարների, որոնք վճարվում են յուրաքանչյուր օրացուցային եռամսյակին հաջորդող առաջին ամսվա ընթացքում: Ընդ որում՝ ԱԳԹ առևտրային համակարգի միջոցով արժեթղթերի շուկայում գործառնությունների դիմաց պարզևավճարները վճարվում են ուղղորդված հաճախորդի՝ Բանկում բրոքերային հաշիվ բացելուց հետո 1 (մեկ) տարվա ընթացքում կատարվող գործարքների համար, իսկ մնացած ծառայությունների դիմաց պարզևավճարի վճարումը միանվագ է:


	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD/12CIB RL 72-01-06	էջ 3/4
ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբ.4/ Ed.4	
		Ուժի մեջ է 30/09/2019թ-ից	

8. Պարզևատրումները վճարվում են համաձայն ստորև ներկայացված աղյուսակի².

Ծառայություն		Ուղղորդման պարզևավճար /ՀՀ դրամ/ (մինչ հարկումը)
Նոր քարտ	Ստանդարտ դասի (ԱրՔա, Visa Classic, MasterCard Standard)	1,000
	Բարձր դասի (MC/Visa Gold, MC/Visa Platinum, Visa Infinite, MC/Visa Business)	6,000
Նոր տրամադրվող վարկ կամ վարկային գիծ	մինչև 2 մլն ՀՀ դրամ	Չի տրամադրվում
	2-ից մինչև 20 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	10,000
	20-ից մինչև 50 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	25,000
	50 մլն ՀՀ դրամից ավելի կամ համարժեք արտարժույթ	50,000
Գործարքներ կատարելու իրավունքով ինտերնետ-բանկ համակարգից օգտվող նոր հաճախորդ		2,000
Ուղղորդված հաճախորդի՝ ԱԳԹ առևտրային համակարգի միջոցով կնքված գործարքների արդյունքում Բանկի ստացած միջնորդավճարների ընդհանուր գումարից պարզևավճար		10%

9. Պարզևատրվող գումարները ենթակա են հարկման «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի (ֆիզիկական անձանց դեպքում) և/կամ ՀՀ այլ օրենսդրական դրույթների համաձայն: Հաջողված ուղղորդումների դիմաց պարզևատրումը վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ուղղորդող անձի հարկային

² Ծրագիրը կիրառելի չէ, եթե ուղղորդվող անձի մասով առկա է պայմանագրային կամ բանկի ներքին իրավական ակտով (ներառյալ Բանկի իրավասու մարմնի/անձի որոշումները) սահմանված սահմանափակում:

	<p align="center">«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ</p>	<p align="center">11RBD/12CIB RL 72-01-06</p>	<p align="center">Էջ 4/4</p>
<p align="center">ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ</p>		<p align="center">Խմբ.4/ Ed.4</p>	
		<p align="center">Ուժի մեջ է 30/09/2019թ-ից</p>	

գործակալ և գանձում է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով /ֆիզիկական անձանց դեպքում/ և/կամ ՀՀ այլ օրենսդրական դրույթներով սահմանված չափով գումարը և փոխանցում պետական բյուջե:

10. Ուղղորդվող անձին կարող է տրամադրվել 50% զեղչով գործարքներ կատարելու իրավունքով ինտերնետ-բանկինգ համակարգ կամ առաջին տարին անվճար սպասարկմամբ AYO Classic քարտ՝ ըստ հաճախորդի նախընտրության: